

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Աստանա, 2011 թվականի դեկտեմբերի 15)

Բելառուսի Հանրապետության կառավարությունը եւ Բելառուսի Հանրապետության ազգային բանկը, Ղազախստանի Հանրապետության կառավարությունը եւ Ղազախստանի Հանրապետության ազգային բանկը, Ռուսաստանի Դաշնության կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության ազգային բանկը (այսուհետ՝ «Կողմեր»),

հիմք ընդունելով 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Արժութային քաղաքականության համաձայնեցված սկզբունքների մասին» Համաձայնագրի (այսուհետ՝ «Համաձայնագիր») 5-րդ հոդվածի դրույթները,

ընդունելով Համաձայնագրի անդամ պետությունների՝ արժութային վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող պետական մարմինների, գործադիր իշխանության մարմինների եւ Համաձայնագրի անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի (այսուհետ՝ «արժութային վերահսկողության իրավասու մարմիններ») միջեւ համագործակցությունը՝ արժութային վերահսկողության բնագավառում,

գործելով արժութային օրենսդրության խախտումների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

1. Սույն Պայմանագրի կարգավորման առարկան է արժութային վերահսկողության իրավասու մարմինների միջեւ համագործակցությունն է՝ արժութային օրենսդրության խախտումների դեպքերի նախազգուշացման, հայտնաբերման եւ կանխարգելման հարցում արդյունավետ

փոխգործունեություն կազմակերպելու նպատակով:

2. Սույն Պայմանագրում կիրառվող տերմինները կիրառվում են Համաձայնագրով, Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ եւ (կամ) Համաձայնագրի անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված նշանակությամբ:

3. Համաձայնագրի անդամ պետությունների կառավարությունները սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում գրավոր տեղեկացնում են միմյանց արժույթային վերահսկողության իրավասու մարմինների մասին՝ նշելով նրանք պաշտոնական անվանումները, հասցեները եւ այլ պաշտոնական վավերապայմաններ:

4. Արժույթային վերահսկողության իրավասու մարմինների պաշտոնական անվանումների եւ այլ պաշտոնական վավերապայմանների փոփոխությունների դեպքում, Համաձայնագրի համապատասխան անդամ պետության կառավարությունն անհապաղ տեղեկացնում է այդ փոփոխությունների մասին Համաձայնագրի մյուս անդամ պետությունների կառավարություններին:

Հոդված 2

Արժույթային վերահսկողության իրավասու մարմինների փոխգործունեությունը

1. Արժույթային վերահսկողության իրավասու մարմիններն իրականացնում են՝

1) տեղեկությունների փոխանակում՝

արժույթային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման բնագավառում արժույթային վերահսկողության իրավասու մարմինների գործելակերպի վերաբերյալ,

իրավական բնույթի, այդ թվում՝ արժույթային վերահսկողության բնագավառում օրենսդրության, արժույթային վերահսկողության բնագավառում օրենսդրության մեջ փոփոխությունների, ինչպես նաեւ արժույթային վերահսկողության կազմակերպման հարցերի վերաբերյալ,

Համաձայնագրի անդամ պետությունների արժույթային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության համակարգերի ստեղծման եւ գործունեության մասին.

2) համագործակցություն՝ Համաձայնագրի անդամ պետությունների ռեզիդենտների կողմից արժույթային գործարքների կատարման ժամանակ արժույթային օրենսդրության խախտման

դեպքերի նախազգուշացման, հայտնաբերման եւ կանխարգելման հարցում, այդ թվում՝ Համաձայնագրի անդամ պետությունների արժութային օրենսդրության խախտումներով իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում, ինչպես նաեւ արժութային վերահսկողության իրավասու մարմինների հարցումների հիման վրա.

3) արժութային վերահսկողության բնագավառում Կողմերի փոխադարձ շահերին առնչվող խնդիրների առնչությամբ փոխադարձ վերլուծական ուսումնասիրություններ.

4) համագործակցության ընթացքում առաջացող հարցերի կապակցությամբ գործնական աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ աշխատանքային խմբերի ստեղծում, փորձի փոխանակում եւ կադրերի պատրաստում.

5) վիճակագրական տեղեկությունների փոխանակման կազմակերպում՝

Համաձայնագրի անդամ պետությունների ռեզիդենտների միջեւ արժութային գործարքներով դրամական միջոցների վճարման եւ փոխանցումների ծավալի վերաբերյալ.

Համաձայնագրի մեկ անդամ պետության ռեզիդենտների կողմից Համաձայնագրի մյուս անդամ պետության իրավասու մարմիններում բացված հաշիվների քանակի վերաբերյալ:

2. Սույն Պայմանագրի իրականացման նպատակով արժութային վերահսկողության իրավասու մարմինները ստորագրում են կոնկրետ ուղղություններով համագործակցության, այդ թվում՝ մշտական հիմունքներով տեղեկությունների տրամադրման կարգի վերաբերյալ արձանագրություններ:

Հոդված 3

Արժութային վերահսկողության իրավասու մարմինների հարցմամբ տեղեկատվության փոխանակումը

1. Կողմերը սահմանում են հարցման ուղարկման եւ կատարման հետեյալ կարգը՝

1) հարցումը պետք է ներկայացվի գրավոր կամ տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Անհետաձգելի դեպքերում ընդունվում է հեռախոսային կապի միջոցով փոխանցված բանավոր հարցում, սակայն այն պետք է անհապաղ գրավոր հաստատվի:

Տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործման, ինչպես նաեւ ստացված

հարցման իսկության կամ բովանդակության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում, հարցումը ստացած արժույթի վերահսկողության իրավասու մարմինը կարող է պահանջել գրավոր հաստատում.

2) վարչական իրավախախտումների գործերով վարույթների շրջանակներում տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցման մեջ պետք է նշվեն՝

հարցումն ուղարկող արժույթային վերահսկողության իրավասու մարմնի անունը,

հարցումն ստացած արժույթային վերահսկողության իրավասու մարմնի անվանումը,

գործի փաստական հանգամանքների համառոտ նկարագիրը՝ անհրաժեշտության դեպքում կցելով հաստատող փաստաթղթերի օրինակները,

հարցումն ուղարկող Կողմ պետության օրենսդրության համաձայն իրավախախտման որակումը,

հարցումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ վկայություններ.

3) տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցումը եւ դրա պատասխանը կատարվում են ռուսերենով:

2. Երրորդ կողմին սույն Պայմանագրի շրջանակներում ստացված տեղեկությունները փոխանցելու անհրաժեշտության դեպքում պահանջվում է տվյալ տեղեկությունները ներկայացնող արժույթային վերահսկողության իրավասու մարմնի գրավոր համաձայնությունը:

3. Հարցումն իրականացվում է՝ հաշվի առնելով հարցումն ուղարկող Կողմ պետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային ժամկետների հարցումն ուղարկած արժույթային վերահսկողության իրավասու մարմնի կողմից պահպանելու հնարավորությունը:

Հարցումն ստացած արժույթային վերահսկողության իրավասու մարմինը պարզաբանման կարգով իրավունք ունի լրացուցիչ տեղեկություններ պահանջելու, եթե հարցումն իրականացնելու համար դա անհրաժեշտ է:

4. Հարցումն իրականացնելու անհնարիության դեպքում արժույթային վերահսկողության իրավասու մարմինը տեղեկացնում է դրա մասին հարցումն ուղարկած արժույթային վերահսկողության մարմնին՝ նշելով մերժման պատճառները:

5. Արժույթային վերահսկողության իրավասու մարմինները կրում են իրենց պետության տարածքում սույն Պայմանագրի կատարման հետ կապված ծախսերը:

Լրացուցիչ ծախսեր պահանջող հարցումներ ստանալու դեպքում, դրանց ֆինանսավորման հարցը քննարկվում է արժութային վերահսկողության իրավասու մարմինների կողմից՝ փոխհամաձայնությամբ:

Հոդված 4

Արժութային վերահսկողության իրավասու մարմինների կողմից գործնական փոխաջակցություն տրամադրելու կարգը

Գործնականում փոխաջակցության տրամադրումն իրականացվում է՝

կազմակերպությունում արժութային վերահսկողության իրավասու մարմինների ներկայացուցիչների աշխատանքային այցերի աջակցության,

սեմինարների եւ խորհրդակցությունների անցկացման,

մեթոդաբանական առաջարկությունների մշակման եւ դրանց փոխանակման միջոցով:

Հոդված 5

Արժութային վերահսկողության իրավասու մարմինների փոխգործունեության սկզբունքները

Արժութային վերահսկողության իրավասու մարմիններն իրականացնում են փոխգործունեություն՝ օրինականության, փոխադարձության, օպերատիվության եւ գաղտնիության սկզբունքների հիման վրա:

Սույն Պայմանագրի կատարման հետ կապված վեճերի առնչությամբ, արժութային վերահսկողության իրավասու մարմիններն անմիջապես համագործակցում են միմյանց հետ:

Արժութային վերահսկողության իրավասու մարմինները եւ դրանց պաշտոնատար անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են պահպանել իրենց հայտնի դարձած բանկային, հարկային եւ օրենքով գաղտնիք համարվող այլ տեղեկություններ:

Սույն Պայմանագրի շրջանակներում արժութային վերահսկողության իրավասու մարմինների միջեւ փաստաթղթերի եւ տեղեկությունների փոխանակումը չի համարվում բանկային, հարկային եւ օրենքով պահպանման ենթակա այլ գաղտնիք:

Հոդված 6

Սույն Պայմանագրում փոփոխություններ կատարելու կարգը

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Պայմանագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 7

Կողմերի միջեւ վեճերի կարգավորման կարգը

Կողմերի միջեւ սույն Պայմանագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով:

Եթե Կողմերը բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը դրանց անցկացման վերաբերյալ վեճի Կողմերից մեկից մյուսին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքը ներկայացնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կարգավորման եղանակի վերաբերյալ Կողմերի միջեւ այլ պայմանավորվածության բացակայության դեպքում վեճի Կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 8

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրը ժամանակավորապես կիրառվում է 2012 թվականի հունվարի 1-ից:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի՝ Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեի կողմից, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Սույն Պայմանագիրը բաց է Մաքսային միության անդամ դարձած այլ պետությունների անդամակցության համար: Սույն Պայմանագրին միանալու վերաբերյալ փաստաթղթերը հանձնվում են ավանդապահի պահպանմանը:

Միացած պետության համար սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում միանալու վերաբերյալ

փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Կատարված է Աստանա քաղաքում, 2011 թվականի դեկտեմբերի 15-ին, մեկ բնօրինակից՝
ռուսերենով:

Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը յուրաքանչյուր Կողմի
կտրամադրի դրա հաստատված պատճենը:

(ստորագրություններ)
